ՍԱՍԱՆՅԱՆ ԻՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՂՎԱՆԻՑ ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ 457-461 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՕՄԻԴ ՄՈՆԹԱԶԵՐԻ (ԻՐԱՆ)

Հազկերտ Բ-ի կողմից կիրառվող Սասանյան Իրանի ուծացնող քաղաքականությունը հայ ժողովրդի, վրացիների և աղվանների նկատմամբ շարունակվում է նաև Պերոզի օրոք, որի հարվածն առաջին հերթին ուղղվում է Աղվանից Վաչե Բ թագավորի դեմ:

Վերջինիս մասին տեղեկություններ են հաղորդում Եղիշեն և Մովսես Կաղանկատվացին, ընդ որում Եղիշեն Աղվանից թագավորին անունով չի նշում, ինչը հիմք է տվել եզրակացնելու, որ Վաչեն պատմական անձնավորություն չէ[1]: Այդուհանդերձ վերջին շրջանի ուսումնասիրությունները թույլ են տալիս Վաչեին համարել իրական պատմական գործիչ[2]:

Համաձայն Մովսես Կաղանկատվացու տեղեկությունների՝ Վաչեն Պերոզի քրոջ որդին էր, Հազկերտ Բ-ի թոռը[3]: Ըստ գոյություն ունեցող կարծիքի՝ Վաչե Բ-ն Աղվանից թագավոր էր 444 թվականից[4], ինչը հավանական է և նշանակում է, որ մինչև 447 թվականը՝ պարսից արքունիքի կողմից դավանափոխության առաջարկը, Վաչեն Աղվանքի թագավորն էր:

Մովսես Կաղանկատվացին հայտնում է, որ Վաչեն Հազկերտ Բ-ի կողմից հարկադրաբար դավանափոխ էր եղել և պարսից թագավորի մահից հետո ապստամբում է պարսից հզոր տերության դեմ: 457 թվականին Հազկերտի մահը և նրա որդիների միջև գահակալական կռիվը հարմար առիթ են

---

[1] **Ակինեան Ն.,** Մովսես Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) և իր պատմութիւնն Աղուանից, Վիեննա, 1970, էջ 80-96: Akinean N., Movses Daskhuranci ev ir patmutyunn Aghvanic, Vienna, 1970, ej 80-96:

[2] **Սվազյան Հ.,** Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից VIII դարը ներառյալ), Երևան, 2006, էջ 195: Svazyan H., Aghvanic ashkharhi patmutyun, Yerevan, 2006, ej 195:

[3] **Մովսես Կաղանկատվացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի (այսուհետև՝ Պատմութիւն Աղուանից աշխարհի), Երևան, 1983, էջ 15-17: Movses Kaghankatvaci, Patmutyun Aghvanic ashkharhi, Yerevan, 1983, ej 15-17:

[4] **Մակար Բարխուտարեանց**, Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 75: Makar Barkhutaryanc, Patmutyun Aghvanic, h. A, Vagharshapat, 1902, ej 75:

ներկայանում Վաչեի համար՝ ապստամբության դրոշ բարձրացնելու համար: Աղվանից թագավորը, օգտվելով սասանյան արքայազների երկպառակտչական պատերազմից, վերստին վերադառնում է նախնյաց կրոնին՝ քրիստոնեությունը հռչակելով պետական կրոն: Մյուս կողմից էլ թագավորի դարձից հետո ծնունդով մոգ մայրը և կինը նույնպես քրիստոնեություն են ընդունում՝ առաջ բերելով Պերոզի զայրույթը: Եղբայրասպան պատերազմում հաղթանակած Պերոզը նամակ է գրում Վաչեին և պահանջում Իրան վերադարձնել իր քրոջն ու քրոջ աղջկան: Վաչեին հաջողվում է քանդել Չողա կամ Դերբենդի լեռնանցքը՝ մասքութների զորքը անցկացնելով այս կողմ, այսինքն՝ հարավ: Աղվանից արքան դաշնակցում է նաև Արևելյան Այսրկովկասի լեռնական թագավորների հետ, որոնք մտնում էին Աղվանից մարզպանության կազմի մեջ, և մեծ կորուստներ պատճառում պարսկական բանակներին: Վաչեն Պերոզին մեղադրում է Հայաստանն ավերելու համար՝ նկատի ունենալով 451 թվականի հայտնի իրադարձությունները: Ինչպես միշտ, պարսիկներն ի վերջո փորձում են ապստամբությունը ճնշել դաշնակիցների օգնությամբ և թույլ են տալիս հոներին հարձակվել Աղվանից թագավորի ապստամբ բանակի վրա՝ բացելով Ալանաց՝ Դարիալի լեռնանցքը: Վաչեն հերոսաբար դիմադրում է, սակայն ուժերն անհավասար էին, և Աղվանից ազատասեր թագավորը, կրելով մեծ կորուստներ և երկիրը հետագա ավերածություններից փրկելու համար, հրաժարվում է գահից՝ իր ժառանգական տիրույթներից վերցնելով հազար ծուխ՝ կյանքի հետագա տարիներն ապրելով որպես ջերմեռանդ քրիստոնյա: Այսպիսով, ապստամբությունը ճնշվում է 461 թվականին՝ տևելով հինգ տարի[5]:

Ըստ էության Վաչեն հարկադրված է հրաժարվում գահից և Պերոզի համաձայնությամբ ու թույլտվությամբ բնակություն հաստատում հայրենական կալվածքներում, որոնք գտնվել են կա՛մ Չողում, կա՛մ մայրաքաղաք Կապաղակի շրջանում, կա՛մ էլ նույնիսկ Կուրից հարավ գտնվող Ավետարանոց գյուղում[6]: Սակայն Վաչեի տոհմական տիրույթների տեղադրման վայրը հնա-

---

[5] **Եղիշե,** Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, աշխատասիրությամբ Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1989, էջ 398: Eghishe, Vasn Vardana ev hajoc paterazmin, ashkhatasirutyamb E.Ter-Minasyani, Yerevan, 1989, ej 398: Ֆ. Մամեդովան ապստամբության ավարտը դնում է 463 թվականին (տե՛ս **Мамедова Ф.** Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н. э.-VIII в. н. э.), Баку, 1986, с. 191-192), ինչը ճիշտ չէ (տե՛ս **Սվազյան Հ.**, նշվ. աշխ., էջ 197):

[6] **Սվազյան Հ.,** նշվ. աշխ., էջ 198, **Ջալալեանց Ս.,** Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփղիս, 1858, էջ 248: Jalalyanc S., Chanaparhordutyun I Mecn Hayastan, masn B, Tpkhis, 1858, ej 248:

րավոր չէ որոշել, քանի որ ո՛չ Եղիշեին, ո՛չ էլ Մովսես Կաղանկատվացուն քիչ թե շատ հայտնի չի եղել թագավորի գտնվելու վայրը, կամ այնքան հայտնի է եղել, որ հարկ չեն համարել անվանապես նշելու նրա գտնվելու վայրը: Այնուամենայնիվ կարելի է գոնե ենթադրել, որ Վաչեն գտնվել է Բուն Աղվանքի կենտրոնական տարածքում: Վաչեի հայրենանվեր գործը և հանուն հավատի պայքարը գնահատվում է նաև եկեղեցու կողմից[7]:

Հեռացնելով Վաչեին գահից՝ Պերոզը դաժան հաշվեհարդար է տեսնում ապստամբ երկրի հետ՝ ավերելով, սպանելով և բռնությամբ դավանափոխ անելով[8]: Պերոզի բռնությունը տարածվում է նաև Հայաստանում և Վիրքում՝ ստիպելով նախարարներին ընդունել զրադաշտականություն:

Պատմագիտական գրականության մեջ կարծիք կա, որ Վաչե Բ-ի ապստամբությունը ճնշելուց և Աղվանից թագավորությունը վերացնելուց հետո միայն 461 թվականին կազմավորվում է Աղվանից մարզպանությունը[9], այն դեպքում, երբ ուսումնասիրողների զգալի մասը Աղվանից մարզպանության ձևավորումը դնում է նախքան 461 թվականը[10]: Վերջին մոտեցման համար հիմք է ծառայում Եղիշեի տեղեկությունը Ճորա մարզպան Սեբուխտի մասին[11], որը 450 թվականին բանակում է վրաց սահմաններից ոչ հեռու գտնվող Խաղխաղ քաղաքի մոտ և նպատակ ուներ ավերելու Աղվանից եկեղեցիները[12]: Վերջին տեղեկությունը նշանակում է, որ Վիրքից արևելք Աղվանից մարզպանությունն էր, որի եկեղեցիները պետք է ավերեր Սեբուխտը: Այստեղ կարելի է նկատել, որ Եղիշեի համար Աղվանքն արդեն պարսիկների ենթակայության տակ գտնվող երկիր էր, որի եկեղեցիներն ավերվելու էին Ճորա մարզպանի կողմից: Այն, որ Սեբուխտն ավերելու էր Աղվանից եկեղեցիները, դա էլ պատահական չէր, քանի որ եկեղեցին միավորում էր բուն աղվանից և հայկական քրիստոնյա բնակչությանը: Մյուս կողմից էլ նկատենք, որ Ճորա պահակից մինչև Խաղխաղ Սեբուխտն անցնում է առանց դիմադրության և շատ արագ: Հետևաբար Ճորա կողմերից մինչև Կուրի անցումը Եղիշեի համար մեկ երկիր է, և Խաղխաղն էլ նշում է միայն որպես Աղվանից թագավորների ձմեռանոց,

---

[7] Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 17-28:

[8] Նույն տեղում, էջ 42-45:

[9] **Սվազյան Հ.,** նշվ. աշխ., էջ 197, 199:

[10] **Арутюнян Б.** Административное деление Закавказских владений сасанидского Ирана согласно труду Елишэ, «Кавказ и Византия», вып. 1, Ереван, 1979, с. 23; **Акопян А.**, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987, с. 118.

[11] **Եղիշե**, էջ 149-150:

[12] Նույն տեղում, էջ 149, 151:

որը Սեբուխտի իշխանության տակ էր, և տվյալ դեպքում պարսից մարզպանը պաշտպանում է իր մարզպանությունը: Այսպիսով, Ճորա մարզպանը նույն Աղվանից մարզպանն էր[13], իսկ Եղիշեի այն տեղեկությունն էլ, թե պարսից զորքը պիտի հալածվեր Աղվանքից[14], նշանակում է ոչ թե Աղվանքից՝ առանց Չողի, այլ հենց ամբողջ Աղվանքից, ներառյալ նաև Չողը[15]: Վարչական առումով Չողը, ներկայիս Դերբենդի շրջանը մտնում էր «Աշխարհացոյց»-ի Իմարծպանան-Մարզպանյան գավառի մեջ[16]: Միաժամանակ հարկ է նշել, որ Վաչեի կողմից Ճորա պահակի քանդումը ոչ թե նվաճման հետևանք էր, այլ լեռնանցքը տվյալ պահին գտնվել է նրա վերահսկողության տակ, քանի որ Աղվանից թագավորն այլևս չէր ուզում ծառայել Արյաց արքային[17]:

Եղիշեի հաջորդ տեղեկությունը, կարծում ենք, տարակարծությունների տեղիք չի տա: Վասակ Սյունին պարսիկ մոգպետին առաջարկում է Սասանյան արքունիքին նամակ ուղարկել, որպեսզի Աղվանից աշխարհում գտնված տասը հազար այրուձին գա Հայաստան[18]: Տվյալ տեղեկության մեջ խոսքը ոչ թե Աղվանք արշաված պարսկական բանակի, այլ այն այրուձիի մասին է, որը գտնվում էր պարսից մարզպանի անմիջական հրամանատարության տակ, որի կենտրոնավայրը Ճորա պահակի շրջանն էր: Հետևաբար, Եղիշեի տեղեկությունները ցույց են տալիս, որ Աղվանքը մարզպանություն էր՝ Չող կենտրոնով, որին տիրողը տիրում էր ամբողջ Աղվանքին: Ուշադրության արժանի է նաև պատմիչի այն տեղեկությունը, որ Հոն Հեռանը Աղվանքում կոտորում է պարսից, այսինքն՝ մարզպանական զորքերին[19]:

Սեբուխտի՝ Աղվանքի մարզպան չլինելը, ըստ Հ. Սվազյանի, հաստատվում է Ղազար Փարպեցու այն տեղեկությամբ, որ Միհրներսեհ հազարապետը Նիխորական Սեբուխտին և այլ ավագների կարգադրել էր հարձակվել

---

[13] **Акопян А.** Албания-Алуанк, с. 115-116.

[14] **Եղիշե**, էջ 151:

[15] **Խորիկյան Հ.,** Աղվանից մարզպանության վարչական բաժանումներն ըստ «Աշխարհացոյց»-ի, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ ու ժողովուրդներ», XXVIII, Երևան, 2011, էջ 80: Khorikyan H., Aghvanic marzpanutyan varchakan bajanumnern yst “Ashkharacuyc”-I, “Mercavor ev Mijin Arevelqi erkrner ev joghovurdner”, XXVIII, Yerevan, 2011, ej 80:

[16] Նույն տեղում, էջ 79:

[17] **Եղիշե,** էջ 398:

[18] Նույն տեղում, էջ 127:

[19] Նույն տեղում, էջ 271:

Հայաստանի վրա[20]: Սակայն այս տեղեկությունը բնավ չի ապացուցում, որ Սեբուխտն Աղվանքի մարզպանը չէր, քանի որ, որպես հարևան երկրի մարզպան, Միհրներսեհի հրամանով նա նույնպես պարտավոր էր հարձակվել Հայաստանի վրա, և նրա ձեռքում կային զգալի ռազմական ուժեր: Աղվանքի և Չողի անջատ լինելու մասին, կարծես թե, վկայում է Եղիշեի այն տեղեկությունը, որ Աղվանից հազարապետն ասում է, որ պարսից զորքը մտել է իրենց երկիրը[21], ինչից կարելի է եզրակացնել, որ Աղվանքը դեռևս մարզպանություն չէր, չնայած որ իր հարևանների՝ հայերի ու վրացիների հետ հեծելազոր էր տալիս Սասանյաններին[22]: Սակայն այս տեղեկության մեջ խոսքը կրոնափոխության քաղաքականություն իրականացնող պարսկական այլ զորքերի և մոգերի Աղվանք մտնելու մասին է[23]: Որ Աղվանքը, Հայաստանը, Վիրքը, Լփինքը մտել են Սասանյան Իրանի կազմի մեջ, վկայում է այն տեղեկությունը, որ մոգերը և պարսից զորքերը, բացի նշված երկրներից, պետք է մտնեին բոլոր այն տեղերը, որոնք պարսից իշխանության մեջ էին և ծածուկ քրիստոնեություն էին պաշտում[24]:

Վերջապես Չողի և Աղվանքի վարչական առումով հավասարազոր հասկացություններ լինելու մասին վկայում է նաև Ղազար Փարպեցին, ըստ որի, Աղվանից և Հոնաց իշխանությունների միջև գտնվող Ճորա պահակը հանձնվում է Վահանին[25]: Սա նշանակում է, որ Չողը նույն Աղվանքն է կամ նրա բաղկացուցիչ մասը: Հետաքրքիր է նաև Ղազար Փարպեցու այն տեղեկությունը, որ Վասակը Վրաց մարզպանն էր, և Աղվանից դուռը նրա ձեռքում է եղել[26]: Աղվանից դուռը Ճորա պահակն է, ուրեմն Վասակը նախկինում Վիրքի ու Աղվանքի մարզպանն է եղել, իսկ Վիրքի և Աղվանքի վարչական միավոր լինելու մասին վկայում է նաև թերևս V դարով թվագրվող սասանյան կնիք-

---

[20] Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, թուղթ առ Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, Երևան, 1982, էջ 150: Ghazara Parpecvo Patmutyun Hajoc, tught ar Vahan Mamikonyan, qnnakan bnagiry G.Ter-Mkrtchyani ev St. Malkhasyanci< Yerevan, 1982,, ej 150:

[21] **Եղիշե,** էջ 141:

[22] Նույն տեղում, էջ 39:

[23] **Խորիկյան Հ.,** Աղվանից մարզպանության վարչական բաժանումներն..., էջ 81:

[24] Եղիշե, էջ 103:

[25] Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, էջ 155. Եղիշե, էջ 157:

[26] Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, էջ 197:

ներից մեկը (Arran ud Wirozān āmārgar= Առանի և Վիրքի համար կար)[27]:

Չողի նշանակությունը Սասանյան Իրանի համար այնքան մեծ էր, որ Աղվանից մարզպանը կոչվում էր Չողի մարզպան: Պարտավի կառուցումը և մարզպանության կենտրոնի տեղափոխումը Կուրի աջափնյակ այդուհանդերձ ավելի անվտանգ էր դարձնում մարզպանական նստավայրը:

Վերևում կատարված քննությունից պարզվում է, որ մինչև 461 թվականը Աղվանքում պահպանվում է սեփական թագավորությունը: Ասվածի լույսով անընդունելի է դառնում նաև Մովսես Կաղանկատվացու այն տեղեկության հավաստիությունը, որ Վաչե Բ-ն Պերոզի հրամանով կառուցում է Պերոզ-պատ քաղաքը, որը հայտնի էր Պարտավ անունով[28]: Ա. Հակոբյանի իրավացի կարծիքով, քաղաքը կառուցվել է Կավատ Ա-ի հրամանով և կոչվել է «Պերոզ-Կաւատ», ինչի մասին հաստատում են նաև արաբական աղբյուրները՝ գրելով, որ Կավատը կառուցում է Բայլական և Բերդա'ա (=Պարտավ) քաղաքները[29]: «Պերոզկաւատ» անունը ժողովրդական լեզվում փոխարինվել է քաղաքանունների համար սովորական «պատ» վերջնամասով, և քաղաքն ընկալվել է որպես «Պերոզ-ա-պատ», այսինքն՝ «Պերոզի քաղաք», ինչն էլ քաղաքի կառուցումը կապել է Պերոզ թագավորի հետ: Քաղաքի կառուցումը կարելի է թվագրել VI դարի առաջին տասնամյակի երկրորդ կեսով[30]:

Նշենք նաև, որ Աղվանից մարզպանության կազմում կային նաև մի քանի փոքր թագավորություններ, որոնցից նշանավոր էին հատկապես Բուն Աղվանքից արևելք ընկած Լփինքն ու Բաղասականը: Եղիշեն, խոսելով Վարդանանց պատերազմի մասին, գրում է, որ Ճորա կողմերի մարզպան Սեբուխտը բանակ է դնում Խաղխաղ քաղաքի մոտ, ընդ որում նրա հրամանատարության տակ էին Բաղասականի թագավորը և Լփնաց թագավորի եղբայր Վուրկը[31]: Բաղասականը և Լփինքը գտնվել են Կուր գետի ստորին

---

[27] **Хуршудян Э.** Армения и сасанидский Иран, Алматы, 2003, с. 230-231: Խորիկյան Հ., Աղվանից մարզպանության վարչական բաժանումներն..., էջ 82:

[28] Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 42:

[29] **Յակոբեան Ա.**, Աղուանքում Արշակունեաց թագաւորութեան անկման ժամանակի մասին, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ ու ժողովուրդներ», XXVI, Երևան, 2007, էջ 78: Hakobyan A., Aghvanqum Arshakunyac tagavorutyan ankman jamanaki masin, "Mercavor ev Mijin Arevelqi erkrner ev joghovurdner", XXVI, Yerevan, 2007, ej 78:

[30] Նույն տեղում, էջ 79:

[31] **Եղիշե**, էջ 153, 155:

հոսանքի ձախափնյակում, Բուն Աղվանքից արևելք[32]: Բաղասականի թագավորությունը 450-451 թվականների իրադարձությունների ժամանակ անհնազանդություն էր դրսևորել պարսից արքունիքի դեմ, ինչի համար Բաղասականի թագավորը սպանվել էր[33]: Այս դեպքից հետո Բաղասականի թագավորությունը կամ թագավորական իշխանությամբ, կամ էլ էլ առանց թագավորի միացվել էր Լփինքին, որը Այսրկովկասի քաղաքական անցուդարձերում ձեռք էր բերել կարևոր նշանակություն[34]: Լփնաց քրիստոնյա թագավորը նույնպես ստանում է պարսից արքայի հավատափոխության նամակը[35]:

Բացի նշված թագավորություններից, կային նաև ավելի փոքր ցեղային երկրներ, որոնց զորքերը մասնակցում են Դերբենդի պաշտպանությանը, և սրանց առաջնորդները պարսից արքաների կողմից ստանում են շահական՝ թագավորական տիտղոսներ[36]: V դարի երկրորդ կեսին Աղվանից մարզպանության կազմում կային մեկ տասնյակից ավելի թագավորություններ:

457-461/462 թվականների հակասասանյան ապստամբության ճնշումից հետո, ըստ էության, Սասանյան արքունիքը վերացնում է նաև Վաչե Բ-ի դաշնակից լեռնական թագավորությունները՝ վարչաքաղաքական առումով մարզպանության կառավարումը դարձնելով ավելի միատարր: Արաբ հեղինակների վկայությամբ Խոսրով Անուշիրվանի ժամանակ միայն լեռնական իշխաններին արքայական տիտղոսներ են շնորհվում, որոնք նրանք մինչ այդ չունեին[37]:

Այսպիսով, կատարված քննությունը ցույց է տալիս, որ 451 թվականի հայոց մեծ ապստամբությունից հետո ևս սասանյան վարչակարգը շարունակում է իր դաժան քաղաքականությունը նաև Աղվանքի նկատմամբ՝ ձգտելով կործանել վերջինիս եկեղեցիները և դավանափոխ անել ժողովրդին: Աղվանից Վաչե Բ թագավորին հաջողվում է տարիներ շարունակ մեծ կորուստներ պատճառել պարսից բանակներին, սակայն ի վերջո ապստամբությունը ճնշվում է: 461 թվականին Աղվանքում և մարզպանության մյուս թագավորություններում

---

[32] **Խորիկյան Հ.,** Բաղասական աշխարհի տարածքը, «Պատմաբանասիրական հանդես», 2010, թիվ 2, էջ 155: Khorikyan H., Baghasakan ashkharhi taracqy, “Patmabanasirakan handes”, 2010, N 2, ej 155:

[33] **Եղիշե,** էջ 270:

[34] **Խորիկյան Հ.,** Բաղասական աշխարհի տարածքը, էջ 157:

[35] **Եղիշե,** էջ 20, 102:

[36] **Акопян А.** Албания-Алуанк, с. 119-120.

[37] Նույն տեղում, էջ 121:

թագավորական իշխանությունը ոչնչացվում է, և վարչաքաղաքական նոր փոփոխություններով պարսից արքունիքն իր կառավարման համակարգը էլ ավելի է կենտրոնացնում և արդյունավետ դարձնում:

ԱՄՓՈՓՈՒՄ

451 թվականի հայոց մեծ ապստամբությունից հետո ևս սասանյան վարչակարգը շարունակում է իր դաժան քաղաքականությունը նաև Աղվանքի նկատմամբ՝ ձգտելով կործանել վերջինիս եկեղեցիները և դավանափոխ անել ժողովրդին: Աղվանից Վաչե Բ թագավորին հաջողվում է տարիներ շարունակ մեծ կորուստներ պատճառել պարսից բանակներին, սակայն ի վերջո ապստամբությունը ճնշվում է: 461 թվականին Աղվանքում և մարզպանության մյուս թագավորություններում թագավորական իշխանությունը ոչնչացվում է, և վարչաքաղաքական նոր փոփոխություններով պարսից արքունիքն իր կառավարման համակարգը էլ ավելի է կենտրոնացնում և արդյունավետ դարձնում:

Բանալի բառեր - Սասանյան Իրան, քաղաքականություն, կրոնափոխություն, եկեղեցի, ապստամբություն, թագավորություններ, արքայական տիտղոսներ:

ПОЛИТИКА САСАНИДСКОГО ИРАНА В ОТНОШЕНИИ АЛБАНСКОЙ ОБЛАСТИ В 457-461 ГОДАХ

ОМИД МОНТАЗЕРИ

После большого армянского восстания в 451 году режим сасанидов продолжает свою жесткую политику и в отношении Албании, стремясь уничтожить церкви последних и прозелитизировать народ. Царю Ваче 2-ому из Албании удается несколько лет подряд наносить большие потери персидской армии, однако, в конце концов, восстание подавляется. В 461 году в Албании и других царствах области царская власть уничтожается, и Персия новыми административно-политическими изменениями делает свою систему власти более централизованной и результативной.

Ключевые слова – Сасанидский Иран, политика, прозелитизирование, церковь, восстание, царства, королевские титулы.

THE SASSANIAN IRAN'S POLITICS TOWARDS THE MARQUISATE OF ALUANK IN THE YEARS 457- 461

OMID MONTAZERI

After the great Armenian uprising in 451 the Sasanian rulers continued their cruel policy against Aluank as well, by trying to destroy its churches and convert the creed of its people. Vatche II, the king of Aluanks succeeded in causing major losses to the Persian armies for many years, but eventually the uprising was suppressed. In 461 some of kingdoms in Aluank and in other realms of the marquisate as well were demolished. Realizing some new administrative and political changes Persia centralized more and more its governing system, making it more efficient.

Key words – Sassanian Iran, politics, conversion of religion, church, uprisings, kingdoms, royal titles.